


Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Գ Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Գ ՈՒ Շ Ա Ր Զ Ա Ն Ն Ե Ր



Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

Ռ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

**ԳԵՂՅՈՎՏԻ
ՎԱՆՏՈՍՊՅԱՆ (ՈՒՐԱՐՏԱԿԱՆ)
ՔԱՐԱՅՐ-ԴԱՄԲԱՐԱՆԸ**



А. С. ПИЛИПОСЯН
Р. А. МКРТЧЯН

A. S. PILIPOSYAN
R. A. MKRTCHYAN

ВАНТОСПСКАЯ
(УРАРТСКАЯ) ПЕЩЕРНАЯ
ГРОБНИЦА
ГЕХОВИТА

THE VANTOSPYAN
(URARTIAN)
CAVE-TOMB
OF GEGHOVIT



ԵՐԵՎԱՆ—2001

ՀՀ ԳԱՄ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ԷԹՆՈՍ» ԵԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ԱՐԱՄԵ» ԳԻՏԱ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎՈՐՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАУЧНЫЙ ЦЕНТР ЭТНО-КУЛЬТУРНЫХ ИССЛЕДОВАНИЙ "ЭТНОС"
НАУЧНО-КУЛЬТУРНОЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ ОБЩЕСТВО "АРАМЕ"
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS OF REPUBLIC OF ARMENIA
"ETHNOS" SCIENTIFIC CENTRE OF ETHNO-CULTURAL RESEARCHES
SCIENTIFIC-CULTURAL CHARITY ASSOCIATION "ARAME"

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ Բ. Ա. ՄԿՐՏՉԱՆ

ԳԵՂՀՆՈՎՏԻ ՎԱՆՏՈՍՊՅԱՆ (ՈՒՐԱՐՏԱԿԱՆ)
ԲԱՐԱՅՐ-ԴԱՄԲԱՐԱՆԸ

А. С. ПИЛИПОСЯН Р. А. МКРТЧЯН

ВАНТОСПСКАЯ (УРАРТСКАЯ) ПЕЩЕРНАЯ ГРОБНИЦА
ГЕХОВИТА

A. S. PILIPOSYAN R. A. MKRTCHYAN

THE VANTOSPAN (URARTIAN) CAVE-TOMB
OF GEGHOVIT

ՀԱՅՏՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՐԱՐՉԱՆՆԵՐԸ
АРХЕОЛОГИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЕНИИ
THE ARCHAEOLOGICAL MONUMENTS OF ARMENIA

18


ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀՈՒՐԱՐՉԱՆՆԵՐ
УРАРТСКИЕ ПАМЯТНИКИ
URARTIAN MONUMENTS

ՊՐԱԿ - ВЫПУСК - ISSUE

IV

«Չ ա ն գ ա կ - 9 7»

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN



Աշխատանքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կղզիքիս

Բ. Ն. Ասարյան, Ա. Ա. Զայանքյան, Է. Վ. Խանգաղյան,
Ս. Ա. Նսայան, Գ. Հ. Կարախանյան

Պատասխանատու խմբագիրներ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անոյան, բանաս. գիտ. դոկտոր
պատմ. գիտ. դոկտոր
կենսաբ. գիտ. բեկնաժու
Ս. Բ. Հարությունյան
Ա. Ա. Զայանքյան
Ն. Հ. Զոչար

ԴՏՀ 902/904 (479.25)
ԳՄԴ՝ 63.4 (2Հ)
Փ 553

Փիլիպոսյան Ա. Ս., Սևրոշյան Ռ. Ա.
Փ 553 Գեղովտի վանտոսյան (ուրարական) քարայր-դամբարանը. - եր.:
«Ձանգակ-97», 2001. - 160 էջ:
(Հայաստանի հնագիտական հուշարձաններ)

Փ 0505000000
0003(01)-2001

ISBN 99930-2-197-0

© «Ձանգակ-97»
© Ա. Փիլիպոսյան, Ռ. Սևրոշյան

ԳՄԴ՝ 63.4 (2Հ)

Հեղինակներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում
ժնուդոլ գեղովտցի, «Մեկանշին» ԲԲԸ տնօրեն
պարոն **Վազգեն Պողոսյանին**,
գրքի հրատարակության գործում ցուցարկած համակողմանի
օգնության և դրամական օժանդակության համար:

* * *

Авторы выражают глубокую признательность
уроженцу с. Геховит, директору ОАО "Ереванстрой"

господину **Вазгену Погосяну**

за всестороннюю помощь и финансовую поддержку
в издании книги.

* * *

Аutors are profoundly obliged to

Mr. **Vazgen Poghosyan**

director of JSC "Yerevanshin"

for his kind sport in publishing of this book.

Սևանի ավազանում շուրջ մեկ հարյուրամյակ շարունակող հնագիտական հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև որանց լրացնող գրավոր սկզբնաղբյուրների ընձեռած տվյալները պարզորոշ վկայում են, որ առևտրա-տնտեսական և էրևմանակալային փոխանցությունների վերհասնում, հետազոտման և մեկնաբանման տեսանկյունից խիստ կարևոր այս տարածաշրջանը նշանակալից դեր է ունեցել Հայկական խոնավշարիի Բրոնզի-Երկաթի դարաշրջանների պատմական գործընթացներում (Լալայան Ե. 1906, էջ 5-37: Լալայան Ե. 1910, էջ 59-84: Լալայան Ե. 1931, էջ 67-117, 194-199: Մնացականյան Հ. 1965, էջ 95-113: Միրախյան Գ. 1968: Արոնց Ե. 1972, էջ 179-181, 205-207: Հմայկյան Ս., Բիշինն Բ., Պարնջիանի Ն. 1996, էջ 47-49: Հմայկյան Ս., Հակոբյան Հ., Բիշինն Բ., Պարնջիանի Ն. 1998, էջ 39-41: Հմայկյան Ս., Սահմայան Հ. 1998, էջ 41-42: Կառաչյան Գ. 1931: Կառաչյան Գ. 1941: Արտառյան Կ. 1985):

Աշխարհագրական այս միավորն ունի բնակիչները, քառ V դարի վերջին Մովսես Խորենացու, իրենց ավանումը (Գեղարքունիք սեպագիր տեքստերում «KURU» «KURU» «Uelikani») ստացել են հայերի առասպելական նախնի Հայկ նահապետի ժառանգ Գեղամի անունից:

Պատմա-մշակութային վերոնշյալ գործընթացների առավել վաղ ժամանակատվածի (Վաղ Բրոնզի շրջափուլ մ.թ.ա. IV հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջին բաղադր) վերաբերյալ մեր տվյալները, հուշարձանների ակադոլոլոլյան (նաև քիչ ուսումնասիրվածությամբ) պատճառով, առայժմ բավական անսանձակալ են ու բերի: Թեև, քառ տարածքի երկրաբանական հետազոտության արդյունքների, վերը նշված ժամանակագրական սահմաններում Սևանի ավազանի բնակչության կամ պայանները (մերձ ձմեռ, տեղումներով առատ անտա) առավել արևելապատ պետք է եղած լինեն տեղանքի բնակեցման համար (Շահյան ՅՕ. 1983): Աճեն դեպքում, դատելով մինչև օրս այս կամ այն չափով ուսումնասիրված հնագիտական հուշարձանների տվյալներից, կարելի է ենթադրել, որ Սևանի վտորոնգեղարքյան հասարակությունը չի ունեցել ընդգծված սոցիալական շերտավորում, բնակչությանը ընդունել են եղել նստակյաց ապրելակերպը և տնտեսավարման երկրագործական-անասնապահական զոգործված երանակը: Այս ժամանակահատվածին բնորոշ է նոր-արարքյան մշակույթից վերաբերող հատուկներ համակիրներ հետազոտվել կամ ծնաբեր պղծվել են Լճաշենում, Չկալովկայում, Նորաշենում, Գալատում (Կամո), Սարլիխում, Ջուրաբում, Նորարախում, Օնակում և Բարաբանում (Մնացականյան Հ. 1965, էջ 95-98, 111, աղ. II, նկ. 6-10: Հմայկյան Ս., Բիշինն Բ., Պարնջիանի Ն. 1996, էջ 48: Մանուսյան Ա. 1988, էջ 427):

Դատելով հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքներից, Սևանի ավազանում պատկեր կտրուկ փոխվել է մուսավորապես մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից: Բացառված չէ, որ այն սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների հետ միասին, պայանավորվել է նաև Էկոլոգիական փոփոխություններով (Շահյան ՅՕ. 1983): Այս ժամանակահատվածից սկսած Սևանի ավազանը դառնում է ինտենսիվ բնակեցվող տարածաշրջան: Դրա լավագույն վկայությունը մ.թ.ա. XXII/XXI-XIX/XVIII դարերի միջինբրոնզեդարյան (2-րդ փուլի) թոնք-վանածոլոլյան մշակույթից վերաբերող հնագիտական համալիրների տարածվածությունն է Գեղարքունիքի գրեթե բոլոր հատվածներում (Յամարաբերդ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Հայրավանք, Նորատուս, Հացատան, Լիքը, Ներքին Գեռաշեն, Գեղոլիվիտ, Ջուրաբ, Վարդենիս, Արցախիչ և

այն) (Լալայան Ե. 1931, էջ 79-80, 151, մկ. 92, 23: Մնացականյան Հ. 1965, էջ 99-105, աղ. I-III: Փիլիպոսյան Լ. 1989, էջ 25-27: Փիլիպոսյան Լ. 1991, էջ 29-31: Փիլիպոսյան Լ., Հովհաննիսյան Վ. 1991, էջ 33-35: Ենգիբարյան Կ. 1991, էջ 69: Հնչակյան Ա., Քիչունյան Բ., Պարսեջիան Ե. 1996, էջ 47-49: Խաչատրյան Լ., Փիլիպոսյան Լ. 1997, էջ 14-15: Պետրոսյան Լ. 1998, էջ 52-53: Մկրտչյան Ք., Միալոսյան Ա., Սալախյան Ա., Մկրտչյան Ք. 1998, էջ 101-103): Հատկապես Լ. որ վերոհիշյալ ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական հայտնաբերումներն են բացառապես դարձրաճանաչին համալիրներից և իսլավա բացակայում տարածաշրջանում այս կամ այն չափով պեղված բնակատեղիների շերտագրական հորիզոններում: Հանգամանք, որն անողորմ կերպով, կարծես թե վախճում է նոր մշակույթը կրողների մտնելու և հիմնականում ամանապատիական եղանակ և ժամանակակից (սեզոնային) փրանստիպ կացարաններում բնակվելու պարագան: Մրամով, թերևս, կարելի է բացատրել Սևանի ավազանի բազմաշերտ բնակատեղիներում մ.թ.ա. III-III հազարամյակների սահմանագծի միջհորոնգեղարյան (բոտր-վանաձորյան) իրողությունների բացակայության հեղինք:

Դատելով հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքներից, մտապիտակյա մ.թ.ա. XVIII դարից Սևանի ավազանի միջհորոնգեղարյան (3-դդ փուլի) հուշարձաններում (և՛ բնակատեղիներում, և՛ դամբարանաշտերում) մասամբ գոյատևած ուղ բոտր-վանաձորյան իրողությունների կողքին նկատվում են սևան-արքայա-կարմիրբերդյան և կարմիրվանաձորյան մշակութային խմբերին բնորոշ նյութաբան դրսևույուններ: Վերջիններս վկայված են Լճաշենի, Նորատուփ, Գավառի, Մորիքի ձորի, Հնչատուփի, Երանոսի, Շալաբուրի, Լիճիքի, Ներքին Գետաշենի, Ջոջ կողի, Արերի, Հնարի դռան, Նորարակ I-ի, Կոլ պալի, Շուվակի և այլ բնակատեղիներում ու դամբարանաշտերում: Այլ խոսքով, Միջին Բրոնզի այս փուլում արդեն նկատվում է Սևանի ավազանի տեղական ժամանակ (չորս 400 տարի) լավ պայթրոնգեղարյան (կոլր-արքայա) հատուկեռտ բնակավայրերի առհասարակական վերաբնակեցումը նշված մշակույթների և մշակութային խմբերի կողմից: Ըստ դրոմ, դատելով միևնույն դամբարանաշտի սահմաններում պեղված համաժամանակյա դամբարաններում ուղ բոտր-վանաձորյան, սևան-արքայա-կարմիրբերդյան և կարմիրվանաձորյան մշակութային իրողությունների համատեղ հանդես գալու հանգամանքից, կարելի է ենթադրել, որ բնակավայր ժամանակատեղում (մ.թ.ա. XVIII-XVI դարեր) վերոհիշյալ մշակույթների և մշակութային խմբերի կողմից արդեն նկատվել են մեկ ընդհանուր բնակավայրի սահմաններում և քաղաքում կատարել միևնույն դամբարանաշտում քաղանք մեկ արտոբակարդի մարտամասերի մեջ (ինսարպով է նաև կենցաղում) դեռևս շարունակելով պատիվները իրենց ժամանակատեղումները: Սևանի ավազանից հայտնաբերված և բնորոշվող սահմանափակվածներից՝ վերաբերող հնամարդաբանական հայտնաբերումներին համարվում են մեկ ընդհանուր բնակավայրի սահմաններում և քաղաքում կատարել միևնույն դամբարանաշտում քաղանք մեկ արտոբակարդի մարտամասերի մեջ (ինսարպով է նաև կենցաղում) դեռևս շարունակելով պատիվները իրենց ժամանակատեղումները: Ըստ Գեղարքունիքի մ.թ.ա. XVII-XVI դարերի վերաբերող գանգարանական հայտնաբերումների, բնակավայրը տարածաշրջանում փաստագրվում է զանգվածային, երկարաձև, արխայիկ մարդաբանական տիպ, որն իր գույառևտներն (նախատիպերը) ունի Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի վաղորոնգեղարյան

(շենգալիքյան փուլ) նյութերում և Մերձավոր Արևելքի ու Միջերկրագնդի ավազանի վերինավաղեղարյան և մեզոլիթյան հուշարձաններում (Մկրտչյան Բ. 1997, էջ 32-33):

Վերը նշված գործընթացների արդյունքում, մ.թ.ա. XVIII-XVI դարերի ընթացքում նույն տարածաշրջանում և անգամ միևնույն բնակավայրի սահմաններում համատեղ գոյություն և իրենց ինքնուրույն հատկանիշները դեռևս պահպանում ուղ բոտր-վանաձորյան, սևան-արքայա-կարմիրբերդյան և կարմիրվանաձորյան մշակույթների և մշակութային խմբերի ստորինավաղեղարյան սերունդներ և դրանց կողմից հանդիսացող բնակչության միավաճումն և հետևանքով, մ.թ.ա. XVI-XV դարերի սահմանագծից Գեղարքունիքում սկսված են մշարվել և մ.թ.ա. XV-XIV դարերի ժամանակագրական սահմաններում վերջնականապես ձևավորվել ընդհանուր մարդաբանական նկարագիր ունեցող հասարակություն և վերջինիս պատկանող որակապես նոր մշակույթ, որը մասնագիտական գրակառուցումն սեղ ստացավ և՛ «Լճաշեն-մեծամտրյան» անվանումը (Ավետիսյան Պ., Բաղասյան Բ., Հնչակյան Ա., Փիլիպոսյան Լ. 1996, էջ 8-10): Հնագիտական հուշարձանների բնօժանդակ տվյալները (ծագր պարագայապատ բնակատեղիներ, մետաղագործարյան և հատկապես զինագործարյան անմասնադի վերելք, ընդգծված սոցիալական շերտավորում ունեցող հասարակության ձևավորում, ստևորա-փոխակառուցում գործարքների ընդլայնում, ռազմա-քաղաքական միջազգային կապերի հաստատում մերձավորարևելյան հզոր տերությունների դեմ և այլն) մասնաճնշում են բնակավայր ժամանակահատվածում (մ.թ.ա. XV-XIII դարեր) Սևանի ավազանում ձևավորված մարտունակ ստիմա-ցեղային (զուցեև վաղ պետական) կազմավորումների գոյությունը:

Ըստ մերձեռ տակ այսօր առկա տվյալների, վերջիններս իրենց անկաս և ինքնուրույն կարգավիճակ պատկանեցին մինչև մ.թ.ա. VIII դարը, այսինքն մինչև այն ժամանակահատվածը, երբ խնդրը տարակա տարածաշրջանը ներգրավեց Հայկական լեռնաշխարհում ձևավորված այն հզոր ռազմա-քաղաքական միավորի կազմում, որը ժամանակակից պատմագրության մեջ հայտնի է Ուրարտու - Ուրաշտու - Քիսայնու - Քիսայնել - Վանի թագավորություն - Արարատ թագաստարբերակ, քայց ըստ էության, հունամիշ և համաժողովրդ անվանումներով: Այն վերջինս մշակույթի և պատմության մի կոնկրետ ղրկված է վերաբերում են այս շեղատարայան մեջ ներկայացված իրողություններն ու դրանց վերլուծությունը: Եվ քանի որ սույն գրքի հեղինակները իրենց տարբերակ ունեն ավելանցում վերը թվարկված անվանումներին, ապա, թերևս, կարելի կա հիմնավորելու նման քայլի անհրաժեշտությունը, ինչպես նաև համատար անդրադարձում վերոհիշյալ անվանումներից յուրաքանչյուրի կիրառման ժամանակ ի հայտ եկող որոշ անհարթություններին և անհամապատասխանություններին:

«Ուրարտու» անվան կողմնակիցները (Մ.Սանգալյան, Գ.Ա. Դավանցյան, Բ.Ա. Կուխտին, Բ.Բ. Պիտրովսկի, Գ.Ա. Մեյիբիշվիլի, Ի.Մ. Դյակոնով, Բ.Ն. Սուբրյան, Բ.Ն. Ջախոխյան, Խ.Գ. Սարգսյան, Լ. Վանդեթ Բերբե, Լ. Դե Մեյեր, Գ. Սավլինի, Գ. Բեյլի, Վ. Կան Լուն, Բ. Մարտրո-Հայրի և այլք) գտնում են, որ այն ամենից անորոշական է արտահայտում Հայկական լեռնաշխարհում հնուց ապրած և մ.թ.ա. IX դարից ինքնուրույն պետականություն ստեղծած ցեղավայրերի հավաքական երկրամունդը (Լավանցյան Գ. 1940: Մուսբախյան Բ., Ջախոխյան Գ., Սարգսյան Գ. 1987: Մուսբախյան Բ., Ջախոխյան Գ., Սարգսյան Գ. 1988: Պիտրովսկի Բ. 1944: Կյւբին Բ. 1944: ՄելուխիաՅի Գ. 1960: Պիտրովսկի Բ. 1962: Դյակոնով Ի. 1963: Մեջանյան Ի. 1978: Sandaljian J. 1900: Maxwell-Hislop K. 1956: Barnett R. 1963: Van Loon M. 1966: Arkural E. 1968: Pitrovsky B. 1970: Vanden Berghle L., De Meyer L. 1982-1983: Belli O. 1991): Որպես ապացույց բերվում են մ.թ.ա. XIII-VII դարերի սատարված արձու-

նագրությունների համապատասխան համվածները, որոնցում քննարկվող կազմավորումը հիշատակվում է Ուրալտրի (յստ Մամանասար I-ի հարդորման), Ուրալտրի (յստ Ալյալ - Ներաի II-ի) և Ուրարտու (սկսած Մարյանասար III-ի ժամանակներից) անվանակալ տարրերակներով (Կարագոզյան Յ. 1998, էջ 11-15; Դալյոնոս Է. 1951, տեքստ № 27; Пиготровский Б. 1959, էջ 32-33; Арутюнян Н. 1970, էջ 12; Luckenbill D. 1926, № 114, № 360; Schroeder O. 1921, № 84; Ebeling E., Meissner B., Weidner E. 1926, էջ 113):

«Ուրաշտու» անվանումը կիրառողները (Ս. երեմյան, Ռ. Հոլմիցի) չիքսաբանվել «Ուրաշտու» անվանումից, այսուհանդերձ վկայակոչում են Հին Աշխարհը ներխույզող բարեբեկյան քարտեզի մաս (մ.թ.ա. VIII դար), Արտեմիտեի քաղաքի Նարուպալարի (մ.թ.ա. 626-604թթ.) մոտ և Արենձյան Իրանի հզոր տիրակալ Դարեհ I-ի Քեխիդանյան արձանագրության մեջ (մ.թ.ա. VI դարի վերջին քառորդ) Հայկական լեռնաշխարհի այդ ազգա-քաղաքական կազմավորմանը տրվող անվանումները, գտնվելով, որ «Ուրաշտու»-ի կողմին է օրհնվում համազար կարող և օգտագործվել նաև «Ուրաշտու» երկրանունը (Пиготровский Б. 1944, էջ 29; Меликишвили Г. 1954, էջ 22; Липин А. 1957, էջ 28, տեքստ 209; Դալյոնոս Է. 1951, АВИИУ-81; Даидзаев М. 1963, էջ 90; Horowitz W. 1988, էջ 148-149, 152-154): Առավել նա, որ վերջինս պաշխանվել է Պատմական Հայաստանի գաղավազից մեկի՝ ինչնուրիբի և համարձակ հայտնաբերում (Շոքոչյուրի, Ռչուրուրի) անվանումներում, ընդհանրապես ընդգծում է «Ուրաշտու» տեղանուն-տեղանի պատմականությունն ու օգտագործման ընդունելի լինելը (Երեմյան Ս. 1963, էջ 79; Հակոբյան Թ. 1968, էջ 180; Կատուխյան Մ. 1983, էջ 682-683):

Անշուշտ փաստարկները հիմնավոր են: Սակայն երկու դեպքում էլ առկա է նշվածը վիճարկող մի հանգամանք: Բաճն այն է, որ Հայկական լեռնաշխարհի այս հզոր տեղություն տիրակալները մայրենի լեզվով բոլորած բազմաթիվ արձանագրություններում իրենց երկիրը եզրեր չեն կոչում Ուրաշտու կամ Ուրարտու: Արեջին անվանումը միայն մի անգամ օգտագործվում է Թոփուզազայի երկրից տրամադրության (ԿԿՆ - 264) աստղերեն տեսառում, այն էլ ոչ թե «^{arm} Urartu» վանկապակցությամբ, այլ «^{kur}URi» գաղափարագրի մեով, որը արևելագոտնեթմբ դաստիկ Սինեդեիթի արձանագրություններից մեկի (АВИИУ - 60) տվյալներից, նույնացմուն են Ուրարտու երկրամասին (Կարագոզյան Յ. 1998, էջ 12): Մինչդեռ մայրենի լեզվով արված մի քանի հարյուր տեքստերում պարբերաբար կրկնվում են ^{kur}Bi-a-i-na («Ռիսյան երկիր») և երկու անգամ նաև ^{kur}Bi-a-i-ni-ն («Քիպանիի երկիր՝ թիպանցիների երկիր») անվանումները, որպես սեփական թագավորության երկրանուն: Սա այս հանգամանքն էլ նկատի ունենալով, ուսումնասիրողներն էլ արևելագոտնեթմբ մի տավար խումբ (Մ. Նիկոլյան, Ա. Ալեյ, Լ.Նո, Բ. Պիտոբովսկի, Ի. Մեչլանովնով, Ս. Սասանյան, Է. Քիյազով, Ս. Հնայակյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան և այլք) հարձար է գտել օգտագործել ^{kur}Bi-a-i-na տեղանունը հենց այսպես, ինչպես ներկայացմուն են սեպագրերը, կամ էլ կիրառել իրոն ժամանակաշրջանի հայերենով վերծանված «Կանի թագավորություն» (թառացիորեն՝ «Կանա երկիր») տարրերակը (Լևն 1915: Հնայակյան Ս. 1990: Հարությունյան Բ. 1998: Մովսիսյան Ս. 1998: Николский М. 1893: Пиготровский Б. 1959: Есакин С., Вигорос А., Амаккин С., Канеция А. 1991: Аветисян Г. 1992: Sayce A. 1929): Անշուշտ, այն ամենահարազատուն է Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերի ընթերցվելու երկարակամը: Սակայն մասնագիտական գրականություն մեջ վերջինիս տարրերը մակարդակներով (լեզվաբանական, լեքսիկալ, ազգագրական, առասպելաբանական, քաղաքական և այլն) օգտագործումը հասնախ տեղիք է տալիս պատմա-ժամանա-

կազրական, էրնո-ազգագրական և լեզվա-մշակութային անմասնատասխանությունների ու խտանաշխորությունների: Բաճն այն է, որ Հայաստանի պատմության, հայ ազգագրության և լեզվաբանության մեջ վաղուց արդեն անբավարարված են «Կանի քարտե», «Կանի ազգագրություն» (այս համատեքստում նաև «Կանի տարագ», «Կանի ոսկերչություն»), «Կան-Վասպուրականի մանրանկարչություն» և ճմարգիթակալ այլ հասկացություններ, որոնք իրենց մեջ բացառապես հայ միջնադարյան (ինչ-որ տեղ նաև հայ քրիստոնեական) մշակույթի, արվեստի, պատմության, բանահյուսության, լեզվաբանության և ազգագրության բովանդակությունն ու իմաստային ծանրաբեկունակությունն են կրում և անվանապես չեն կարող անմիջականորեն նույնացվել և առավել ևս, միանշանակ գիտահանգել Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IX-VI դարերում գոյատևած տեքստային գրիկ ու լեզվից, նյութական ու հոգևոր մշակույթին և ազգաբանաքական պատմությանը:

Սա, թերևս, վերոհիշյալ բոլոր անհամասնատասխանություններն էլ հաշվի առնելով, արևելագոտնեթմբ մի այլ խումբ (Ն.Վ. Հարությունյան, Հ.Հ. Կարագոզյան և այլք) նպատակահարմար գտավ հնարավորին չափ հարազատ մնալ մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի «տառից ու ոգուն» և մասնագիտական գրականություն մեջ սեպեց կիրառել սեպագրական հանդիպող ^{kur} Biaina - ^{kur} Biaoilii անվանումները («Քիպանի-Քիպանիկ» տարրերակ (Կարագոզյան Յ. 1998, էջ 12, 20, 24, 160, 164 և էջեր: Ару-тюнян Н. 1970): Սա, իր հերթին, առաջ բերեց պատմա-ժամանակագրական մի նոր անհամատասխանություն: Բաճն այն է, որ ^{kur}Biainii տարրերակը (ինչպես նշեցիք վերևում) Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերում հանդիպում է ընդամենը երկու անգամ և վկայված է միայն Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-714 թթ.) Թոփուզազայի (ԿԿՆ-264) և Նոր Բայազետի (Քալատ) (ԿԿՆ-265) արձանագրություններում: Սյսիբեթ որպես քննարկվող տեքստային անվանում ^{kur} Biainii-ն լավագույն դեպքում կիրառվել է մ.թ.ա. 735-714թթ. ընդգրկող ժամանակահատվածում, և ըստ այդ էլ, ղզվար քե կարող է առանց փաստաթղթի հիմնավորման մ.թ.ա. 735 թվից առաջ և մ.թ.ա. 714 թվից հետո ևս հավանել այդ դեպ կատարվել:

Ավելացնեմ նաև, որ «Ուրաշտու», «Ուրաշտու», «Քիպան», «Քիպանի-Քիպանի» և «Կանի թագավորություն» երկրամասնակալ տարրերակները նախընտրող արևելագոտնեթմբ իրենց մնացություններում և հողկաններում չիքսաբանվեցին մեկ վերոհիշյալ համադաս անվանումների գուգորդված օգտագործումից: Այսպես, նույն ուսումնասիրության մեջ քննարկող երկրից կարող է կոչվել «Քիպան» կամ «Քիպանի», որս սեպագիր լեզուն՝ «ուրարտերեն», իսկ երբևի կազդը կամ վերնախոսող՝ «ուրարտացիներ»: Սեկ այլ հետազոտության մեջ երկիրը կարող էր հոնջորդվել «Կանի թագավորություն», իսկ ըստ դիպարանն ու նյութական մշակույթ՝ «ուրարտացիներ»: Երրորդ աշխատության մեջ երկիրը կարող էր կոչվել «Ուրարտու», լեզուն՝ «ուրարտերեն», իսկ այդ հարցերը քննարկող գիտնյուղը՝ «խաղաղաստրոյան» (Мерр Н. 1920: Мезмариан Է. 1927: Tsereteli M. 1928: König F. 1955: Տես նաև վերը հիշված հրավարականները): Հանգամանք, որ ինքնին խտսում է օգտագործված անվանական-տեքստիբանական համակարգի անկատարություն և ոչ ճնուր լինելու մասին:

Մեր դարի 60-70-ական թվականներից սկսած և մասամբ նաև այժմ, հիմնարկներ սեպագրերի վերծանումն ու ընթերցման հանրեռնամուր օրենքերին ու ինտերակրպին անձնաբուր որոշ հետազոտողների հրապարակումներում, Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IX-VI դարերի հզոր տեքստային առաջակալ կամ «Արարատ» կամ «Արարատի թագավորություն» անվանումը (Հախիմյան Լ. 1984: Ավակյան Ս. 1986: Իշխանյան Ռ. 1988: Իշխանյան Ռ. 1988 ա: Իշխանյան Ռ. 1989: Իշխանյան Ռ. 1989 ա: Կակուսյան է.

1990: Կարպեդյան Ա. 1992: Հահինյան Լ. 1994: Տերյան Ա. 1995: Хачатурян В. 1991: Гегурян П. 1998, էջ 307-328): Ըստ որում, իսկապես ամփոփելի հիմնավորում և իմաստային ծանրթանգեղամոտրյուն ունեցող այս որոշ երկրամուտ-տարբերակի տակ, գուտ կամայական մասնատումներով ստացված «քառաբնառային», «ամճամճանակային» և «տեղափոխական» պարզունակ, երբեմն մաս շինճում գուգահեռների և մակերեսային, տարբերակի, երկակարկան-հերարդական մեկնաբանությունների անկարգակում սկեզդին շահարկվել հայ ժողովրդի էրկին ամնարարություն, նրա՝ ի վերտուտ երկրագործի նրա առաջին գոյություն ունեցած լինելու, աշխարհի հին և որոշ մյուտ ժողովուրդների և մշակույթների նախատեղի հանդիսանալու և Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերի լեզվաբերականակալ վերծառումների «նարքան» և «վերբերքեցման» (այն էլ հիմնականում ժամանակակից հայերին հենքի վրա) խնդիրները...

Ավելին էլ, որ «Արարատ»-ն ստատրական արձանագրությունների «Ուրարտ» երկարման ռչատարներն, մաս ավելի ուշ դրսևորված հայերեն անվանմանն է (այս համընդհանուր կարծիքը չի կիսում միայն Հ. Կարապետյանը): Ըստ որում այն «Արարատի թագավորություն» և «Արարտի երկիր» տարբերակներով հանդիպում է ինչպես Հին Կատակարանի երբայրերն օրինակում, այնպես էլ պատմահայր Մովսես Կորենացու «Հայկ պատմության» մեջ: Այլ խոսքով, ինչպես «Ուրարտ», «Ուրարտու», «Ռարայում» և «Քաջ պատմության» մեջ: Այլ խոսքով, ինչպես էլ «Արարատ»-ը, «Արարտի երկիր»-ը և «Արարատի» անվանմաները, այնպես էլ «Արարատ»-ը, «Արարտի երկիր»-ը և «Արարատյան թագավորություն»-ը պատմական հավակնի սկզբնաբանություններով վկայված իրողություններ են և իրավաբան ունեն զիսական կիրառության: * Այլ հարց է, քե ինչ են ներկայացրել մ.թ.ա. II հազարամյակի վերջի - մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի ստատրական տեքստերը, մ.թ.ա. I հազարամյակի կեսերին վերագրվող երբայական աղբյուրները և Մովսես Կորենացու մտայնի միջնադարյան ձեռագիր կրկնօրինակում ներմ այդ անվանումների տակ և, որքանով են վերջիններս պատմա-ժամանակագրական և էրեռ-մշակութային ամուսններով համարելի: Ըստ մ.թ.ա. XIII-XI դարերի աստական արձանագրությունների Ուրարտի-Ուրարտի «Կանա լճից հարավ և հարավ-արևելք, Տավոսյան լեռների շրջանում ապրող թագաձիվ ցեղախմբերի (հայտնի են նրանցից ութի անվանումները) դաշնակցության հավաքական երկրամունն է: Նույն սկզբնաբանությունների մ.թ.ա. IX-VII դարերի հատորումներն արդեն «Ուրարտ» երկարման տակ մեկնակցում են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և թերևս հարավ-արևելյան մասը: Ըստ որում, «Ուրարտի-Ուրարտի-Ուրարտու» տեղանվան ձևավորման գործում, արևելահայտների և լեզվաբանների կարծիքով կարևոր դեր է խաղացել Կորդոքի լեռներում տեղակված Արարտի (Արարտ) լեռան անվանումը («Աշխարհագրոյ»-ի Արարաղ լեռն է, ժամանակակից Սիրիայի և Թուրքիայի սահմանաձից գտնվող Ջուղի դուրը): Հենց այս տարաբնու է տեղայրում «Արարտի երկիր»-ը մաս պատմական կոնցեպտ: Ինչ վերաբերում է երբայական աղբյուրներին, ապա «Արարտի թագավորություն» կամ «Արարատյան թագավորություն» անվան տակ վերջիններս թերևս ընկալ են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և իյուսիսային հատվածները:

Նույն ժամանակ տարածա-ժամանակագրական այս անհասպատասխանությունները գուցե բացատրելի են Ուրարտի-Ուրարտու կազմող ցեղախմբերի նախնական բնակության տարածքի (թերևս Կորդոքի լեռներից մինչև Կարս լեռն ընկած շրջանում) առիճանակալ ընդարձակման և պատմա-մշակութային կամուրջություն

* Մասնավորապես բնակավայր երկրի համար Արարատ անվանումն են նախընտրում մաս գերմանացի արևելագետները (Rimschneider M. 1966, Warteke R.-B. 1993):

ունեցող մի շարք իրողությունների, այդ բովում մաս աշխարհագրական որոշ անվանումների տեղափոխման, երկրորդում և նույնիսկ երրորդում հանգամանքով թերևս այդ ճանապարհով էլ Արարտի (Արարտ) լեռան անունն առաջինմարտ անցել ու միայն Ուրարտի-Ուրարտի-Ուրարտու-Արարատ երկրին, այն Արարատյան դաշտին և Արարատ լեռանը: Ի դեպ, վերջինիս առավել հին անվանումը Մասիան է, որն իր հերթին տեղանվանակալ փոխակերպումների և առաջինակալ տեղափոխությունների իր ուղին և բացատրությունն ունի և այդ առումով կարող է համապատկ շունթանակ էսպի և սասպակների Մաշու լեռան, ժամանակակից Սիրիայի իյուսիս-արևմուտքում գտնվող Մասիսի լեռնաշրջայի, Հայկական լեռնաշխարհի Նեխ-Մասիսի (Սիվան գոտի) և Հյուսիսային Կովկասում գտնվող Մաշու լեռնաշրջայի (Պյատի-գորակի մոտ) անվանումների հետ (Փիլիսոսյան Ա., Զամախյան Հ. 1997, էջ 67-69): Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IX-VI դարերում գոյատևած պետություններն «Արարատ» կամ «Արարատյան թագավորություն» անվանումը, ապա այս խնդիրը դեռևս ամբողջապես չի լուծում առաջ բաշված պահանջները: Ել ստե քե ինչու: Նախ, ինչպես «Ուրարտու», այնպես էլ «Արարատ», «Արարատի երկիր» կամ «Արարատյան թագավորություն» բնորոշումներն իսպառ բացակայում են խնդրող առարկա երկրի տիբակալների մայրենի լեզվով րոյում արձանագրություններում: Քաջի կամ «Արարաթ» («Արարատ») և կոչվել մաս ժամանակակից ենթեն մայրաքաղաք Մասիսից մոտ 200կմ իյուսիս-արևելք տեղակորված և Սարայի թագավորության մութարքի Յասամար Բայիին և նրա հաջորդների կողմից մ.թ.ա. VIII-VII դարերում կառուցակալված (այսինքն Ուրարտու-Քաջիկի-Արարատիև համաժամանակալ) թաղաք-ամրոցը (Կարաբեղզևան Յ. 1998, էջ 280-281: АУХДИН А. 1971, էջ 153: Грэгзев - Бирч П. 1978, էջ 4, 6, 11, 13, 15, 273-274, 276): Ավելացնեն մաս, որ մ.թ.ա. I հազարամյակի կեսերին և ավելի ուշ «Արարաթ» անվանումն են կրել Կասպողղկայի թագավորության անճվազ ինը տիթակալներ (Бикерман Э. 1976, էջ 200): Փաստեր, որոնք անհիշակալ կալ (և ընդհանրապես որև կալ) չունեն «Ուրարտ», «Քաջիկի» կամ «Կանա» երկրի անվան և գրաճեղատ մտարքերի հետ և կարող են տեղանվանակալ և անճանկանակալ ավելորդ խառնաշփոթությունների պատճառ հանդիսանալ:

Այս վերջինիշյալ անհասպատասխանություններից և խառնաշփոթություններից Մասիսիտու մասակալով, Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակի վերջին քառորդի իյուսիսավայր է մ.թ.ա. IX-VI դարերում պետականություն հասած հզոր տեղության համար, մենք նպատակահարմար ենք համարում գիտական շրջանառության մեջ մտցնել «Կամուրանի թագավորություն» (կարել է մաս «Կան-Տոսպի թագավորություն») անվանում-տեղանվան: Բանն այն է, որ խնդրող առարկա երկրի տիբակալներն (Իշպուրդի, Սեմուն, Արիշքի և Սարդուրի II, Ռուսու I, Արիշքի II, Ռուսու III) իրենց սեպագիր հատորումներում սեփական տիտղոսները բարկրկելիս, անճուշտ, ոչ պատասխանակալ ընդգծել են մաս, Biana (— Կան) երկրի թագավորն ու Մաշո (Տոսպ) թաղաքի տեղը ինչու պարզակալ (YKH — 19: 25: 37: 39: 45: 57-59: 61: 66-70: 72: 79: 91: 92: 101-108: 119: 127: 128: 130: 131: 134: 136-138: 144-147: 155: 158: 164: 165: 168: 170: 173: 269: 278: 280: 281: 287: 293-296): * Այսինքն տվյալ դեպքում արքայական

* Այս ասումով, հատուկին մաս այն տեքստերը, որտեղ փոփոխյալ տիթակալների մի մասի տիտղոսանվանումն Biana երկրամունը հանդիպում է առանց Մաշո քաղաքանվան և ընդհակառակը Մաշո-ի սակայությունը ընթացակալում է Biana-ն: Այս հաշվարկներով կարելի է փաստել այդպիսի II դար, որոնցից երկուսում բացակայում է Մաշո քաղաքանունը (YKH — 265: 276), իսկ ինճում Biana-ն (YKH — 29: 34: 127 II: 161: 287: 293-296): Այլ խոսքով, ինչ որպես Մաշո քաղաքանունը մաս երկրի է խորհրդաբանել: Այստեղ հարկ է ընել մեկ

սիտրոնների տասնմայակներով մշակված և իմաստավորված բանաձև-սահմանում-ներում Baina-Վան և Tupa-Snoy տեղադրման հայտըրական, համարված կիրառում են անկերպահորեքն քնկալել և որպես խնորո առարկա հոբը և անկախ տերություն էրն-ուզան-բաղաբական, կրոնական և աշխարհա-տարածական ճեմհանորության անվանական խորհրդանիշ: Ուստի «Վանոտայ» («Վան - Տոսպ») երկրանուն տերմինը սույն գրքի հեղինակների կողմից հորինված և կամայականորեն հարմարեցված երկրանուն չէ, այլ սեպագիր սկզբնաղբյուրներով փաստված կոնկրետ իրողություն, որը հարյուրամյակներ անց էլ պահպանվել է Հայոց աշխարհի «Կասպորական ճահանգի Վանոտայ գավառի անվան մեջ (Թովմա Արծրունի և Անանու 1885, էջ 102-103, 372-375 և այլն): Այս գավառը տարածական առումով ևս, ըստ էության, համընկնում է բնակչությո նրերի բուն սահմաններին և (մեկ անգամ և ուրում ենք ընդգծել) իր անվան մեջ անբարպա կերպով վերարտադրում է վերջինիս սեպագիր երկրանվան ^(K16) Baina - Վանա երկրի) և մայրաքաղաքի (և ^(K17) Tupa-Snoy-ya քաղաք) քաղաքանային հասակ-բյուրյունը: Սուսպարկվող անվանում-տերմինը հարստ էր և՛սե քննարկվող հզոր տերության լեզվական, էրնիկական, մշակութային և այլ իրողությունները ներկայացնելու առումով: Այսպես, «Վանոտայի քաղավորության սեպագիր արձանագրությունների լեզուն կարելի է անվանել «վանոտայեան», քննիչներից «վանոտայեաններ», մշակույթը՝ «վանոտայեան» և այլ անմեծ տակ ընկալել Հայաստանի պատմության մ.թ.ա. IX-VI դարերի վերաբերող պատմա-մշակութային կոնկրետ իրողությունները: Սուս, ըստ մեզ, հնարավորին չափ սահմանափակում է տարածաժամանակյա դրսևորում և էրն-սլոյաբար-հարցական հենք ունեցող համանվանական խառնվածիություններն ու հստակորեն ընդգծում, որ վերոնիշյալ հասկացությունների տակ գործ ունենք Վան-Վասպուրականի (նաև: Հայկական լեռնաշխարհի) հայ ազգաբնակչության անմիջական նախնիներից մեկը հանդիսացող տեղաբնիկների նյութական և հոգևոր մշակույթի, գրի ու պատմության հետ: Այդ իսկ պատճառով, մենք համակարծիք չենք այն ուսումնասիրողներին, որոնք առաջադրված այս տեղանուն-տերմինի տակ սույն մշակութային ծանրարեմ-վարքություն են բնկալում, վերջինս փորձում են մատուցել որպես Էշպոթիան և Սեմոնա քաղաքների բարեկիրտումների ծրագրի իրականացման հետևանքով ձևավորված «էի-տար, պետական մշակույթ» և այն առանձնացնում են ու, ըստ էության, հակադրում Հայաստանի (ժամանակակից սահմանների մեջ տեղաբաշխված) համաժամանակյա հուշարձաններից հայտնաբերված և այսպես կոչված «տեղական մշակույթի» արձագանք համարվող նյութական արժեքներին: Առավել ևս, որ նշվածը իրենավորվում է «սարկաչ-ճիկ» մկալված տարբերակումներով (Մեսայան Ս., Բիլյազով Ա., Հնայական Ս., Կանեց-յան Ա., 1995, էջ 59-60): Ինչ «տեղական» և «ոչ տեղական» իրողությունների մասին է խոսքը, երբ երևույթը վերաբերում է ողջ Հայկական լեռնաշխարհին և գոյություն ունի բացառապես մի աշխարհա-քաղաքական սահմաններին ներսում: Չենք խոսում արդեն «տեղական» և «ոչ տեղական բերույթի» հավաքությունների մակարդակում կատարվող մասն տարբերակման հետևանքով հնարավոր ոչ ցանկալի «գիտական» շահարկում-ների մասին...

Անս քն ինչու, մենք առաջարկում ենք Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IX-VI դարերի քաղաքական, էրնիկական, մշակութային և լեզվական կոնկրետ դերոտումները

ուշագրվող դիտարկում ևս: Իշպոտինի և Սեմոնա արքաների համատեղ գտնակված ժամանակ փորագրված Նեյաշինի երկվեզու արձանագրության աստիճանի հատվածում (YKH - 193,16) Տուպայան անվանվում է Նաիրի երկրի մայրաքաղաք:

ներկայացնել «Վանոտայ» («Վան-Տոսպ») պատմական տեղանունից բխող տերմին-արտաբերվելով:

«Վանոտայի քաղավորության նյութական մշակույթին, պատմությանը, կրոնին, ճարտարապետությանն ու քաղաքաշինությանը, գրի ու լեզվին, կենցաղին ու գործունեությանը այլ որոտների վերաբերող անձնատարերի հարցերը շուրջ մեկ ու կես հարյուրամյակ է, ինչ բազմաթիվ արևելագետների, պատմաբանների, արվեստագետների, լեզվաբանների ու հնագետների ուշադրության կենտրոնում են (Վախանյան Գ. 1940: Մեսայան Ս. 1982: Վախաբալյան Կ. 1984: Հնայական Ս. 1990: Արզրունյան Մ. 1995: Կարապետյան Յ. 1998: Մակիսյան Ա. 1998: Փիլիպոսյան Ա. 1998: Անանյան Գ. 1999: Մեշանյան Ի. 1927: Մեռլինյան Գ. 1954: Պիոտրովսկի Բ. 1959: Մարտի-րոսյան Ա. 1961: Պիոտրովսկի Բ. 1962: Դրյաչոն Ի. 1963: Արտյոտյան Ի. 1966: Դրյաչոն Ի. 1968: Արտյոտյան Ի. 1970: Մարտիրոսյան Ա. 1974: Մեշանյան Ի. 1978: Հոճախ Տ., Երուստյան Կ., Օգանյան Կ., 1979: Օգանյան Կ. 1980: Եսան Կ. 1985, էջ 112 - 122: Արտյոտյան Ի. 1985: Խաչիկյան Մ. 1985: Vanden Berghе L., De Meyer L. 1982-1983: Mehrav R. 1991 և այլն):

Կուտակված ու հետագրված իսկայնավալ նյութը և վերջինիս հիման վրա արված վերլուծություններն ու մեկնաբանությունները բացառիկ նշանակություն ունեն Հայաստանի գլոբ շրջանի պատմության կոնկրետ շրջափուլի համակորմանն ուսումնասիրության գործում: Այսուհանդերձ, յուրաքանչյուր նոր հուշարձանի հետազոտությունն ի գործ է փոփոխություններ մտցնել վերջինիս բնագոյ լեզվաբանությունների համակարգում, անհանգելի նոր և արդյալան միջոցների ու եղանակների, ինտելեկտուալ գիտական համակարգերի օգտագործում և, այս անձին հենքի վրա, անպիճակ հեմաբ-վող եզրահանգումների ստուգում, շակում, լրացում և երե հարկ կա՝ նորույ մեկնաբանում:

Այդպիսի ինքնատիպ և Վանոտայի քաղավորության պատմության ու մշակույթի հետազոտման համար կարևոր նշանակություն ունեցող հնագիտական հուշարձանի Գեղեղուտի քարայր-դամբարանի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն աշխատանքը:

Հնարավոր է տարիներ անց այս ուսումնասիրության մեջ արված եզրահանգումների ու մեկնաբանությունների մի մասը կորցնեն իրենց գիտական քարնդությունը: Սակայն, գիտական տեսակետին մի ուսումնասիրություն և մեծաթիվ կմնա Հայաստանի պատմության Պետական քանգարանի գեոտեղաբանում պատվող հնագիտական այն ծողվածումը, որ 1980 թվականին հավաքված և 1993-ին պիղելի Գեղեղուտում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար հնագետ, պատմական գիտությունների թեկնամու Լևոն Պետրոսյանի, ավագ գիտալիստտող, պատմական գիտությունների թեկնամու, հնագետ Աշոտ Փիլիպոսյանի, գիտալիստտող, պատմական գիտությունների թեկնամու, հնագետ-մայրաքաղաք Ռուզան Մկրտչյանի, գիտալիստտող, հնագետ Նորա Ենգիրայրյանի և Հայաստանի Պատմության Պետական քանգարանի Հնագիտության բաժնի վարիչ, Լուդվիկա Խաչատրյանի ցանքերով:

Այլ կարևոր գործին իրենց ամբնակված մասնակցությունը բերելին նաև Գեղեղուտ գյուղի քնակիչներ Արզար Հովհաննիսյանը, Սմբատ Հովհաննիսյանը, Կարեն Շահումյանը, Համբարձում Սուրիսյանը, Գնունի Մանգիսյանը, Հայկ Կարիբյանը, Վահան Նովիկյանը, Լիա Խաչատրյանը, Հերմիկ Հովհաննիսյանը, Խաճակ Մամուկյանը, Նիդազար Հունանյանը, Վարդինա Խաչատրյանը, Արմեն Շահումյանը և այլոք:

Հնդհնակները իրենց շնորհակալությունն են հայտնում մաև Երևանի թշվառական Համալսարանի թերապևտիկ առանձնարտժույցյան ամբիոնի վարիչ, թշվառական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաղեի Տառիցյանին և դրոժեն Լևոն Անդրեասյանին, հուշարձանից հայտնաբերված հնամարդարանման նյութի առանձնաճանաչումն համակարգի հետազոտման և մասնագիտական պիտոլոգիան համար:

Հավաքածուի մետաղական առարկաները մաքրվել ու ամրակալվել են Հայաստանի Պատմության Պետական բանգարանի վերականգնման լաբորատորիայում, Ալբիս Եռայանի կողմից:

Ինքեղեն անորոշոր մարդիկ, հավաքել և ամրակալել և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից, վերականգնող Վարդան Վարդանյանը:

Գրքում գետեղված զմանկարներն ու շափարկությունները իրականացրել է Ե.Պ.Հ հնագիտության լաբորատորիայի նկարիչ Աննա Վալդայանը:

Տեսքի համակարգային շարվածը կատարել են Տաթևի Հոխիկյանը, Լիլիթ Վանյանն ու Անահիտ Սարգսյանը:

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՎԿԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Քննարկվող հնագիտական հուշարձանը պատահաբար բացվել էր Մևան լճի հարավ-արևմտյան ափերից մոտ 5 կմ հարավ (աղ. 1), լճից դեպի Սեյիսի լեռնանցքը տանող ճանապարհի աջ կողմում, ներկայումս Գեղիկուտ գյուղի միջով հատող գետակի մասն ակնին, այդ հասավածում կառուցվող կամրիջի շինարարության ժամանակ (Փյլիսպոլյան Լ., Խաչատրյան Լ., 1995, էջ 80): Պայթեցման, ծանր տեխնիկայով կատարվող հողահեռացման ու հողահարթեցման աշխատանքների հետևանքով քանդված հուշարձանի նյութական արժեքների մի զգալի մասն անտեսվածության հետևանքով լքվել էր կառուցվող կամրիջի հինքի մեջ և բևտուսպատված: Բարեբախտաբար գետնի ներս դուրս եկած և գյուղի բնակիչների կողմից հավաքված, ապա և տեղում հետազոտյալ տեղիված հնագիտական նյութերի մի արժեքավոր հավաքածու փրկվեց կորստից ու մուտք գործեց Հայաստանի Պատմության Պետական բանգարան:

Տեղանքի հետազոտումը և պեղված հնագիտական մակերևի տեսականում ուսումնասիրությունը բույլ տվեցին եզրակացնել, որ գետակի մակերևույթից մոտ 15-20մ բարձրության վրա, նրա զառիթալ ակին գտնվող և հողմահարման հետևանքով քաղաքի ժայռի մեջ գոյացած քրեական խոռոչը ներարկվել է մասնակի ձևափոխման և վերածվել երկու հատորակից սրաներից կազմված քարայր-դամբարան (աղ. 2): Ըստ որսւմ, 1980 թվականին շինարարական աշխատանքների հետևանքով լիովին ավերվել է ժայռավոր կառուցվածք ունեցող, արտաքին մտրիչք ու ելքի գուրկ և նեղ, ձևափոխ միջանցքով առաջին խոռոչ-սրանիկ հատորակվող, երկրորդ սրանի: Այստեղ ամփոփված են եղել դամբարանի տեղը, նրան պատկանող գույրքն ու անձնական շքեղ իրերը: Այս չպահպանված սրանի, նրա նշանակության և ուղղվածության մասին արված են քարտրոգրաֆների համար որոշակի կինքեր են տալիս ժայռավոր կառույցի առաջին ամրորդակից պահպանված սրանի (այն, հավանաբար, դեպի հինմական խոցող տանող նախասրահ է հանդիսացել) հետազոտման, պեղման ու շափարգման աշխատանքները: Դրանք հնարավորություն են ընձեռում փաստել, որ քննարկվող կառույցն ունեցել է ընդգծված հարավ-հյուսիս կողմնորոշում և դեպի արևելք նայող կիսաձվածքի բնական մուտք, որը, բերևս, փորքից վերանշակվել է դամբարան կառուցողների կողմից (աղ. 2, նկ. 1): Մուտքի բարձրությունը 2.55մ էր, լայնքը հինքի մոտ 4.00մ: Առաջին սրանի բնոհանձր ձևափոխերս մոտ 30-32մ² էր, սրանի ամնամեծ երկարությունը հարավից-հյուսիս 8.30մ, անձնամեծ լայնքն արևելքից-արևմուտք՝ 5.20մ: Այս սրանի ուներ մուտքի ստորին մակարդակի նկատմամբ մոտ 0.25-0.30մ ցած տեղավորված, համեմատաբար հարթ հատակ (այն հարբերակ էր դամբարանը կառուցողները) և անկանոն հատակագիծ: Առաստաղը բույլ կամարան էր (մշակման հազվի նկատելի հարբերով), իսկ առաջ-վերապուրջ բարձրությունը հավասար էր 3.10մ-ի: Մրանի հարավային հատվածն արվել անձնակ ու նեղ (լայնքը մոտավորապես 2.00-2.50մ), սակայն օժտված էր կառուցվածքային յուրահատուկ մանրամասով: Վերին (այսինքն առաջին սրանի կամարան) առաստաղի հարավային) անկյունում ուներ 2.80մ² մակերեսով (1.40x2.00) միջանցիկ փորվածք-պատուհան: Մրանի հյուսիսային հատվածը համեմատաբար քնյարձակ էր և ուներ 4.00-4.30մ լայնք: Հնեց այս հատվածում, քարայրի հյուսիսային պատին, հատակից մոտավորապես 0.30-0.40մ բարձրության վրա փորվել էր 0.54մ² մակերես (1.08x0.50), մոտ 0.45մ խորություն և հարավ-հյուսիս կողմնորոշում ունեցող միջանցք: Վերջինս հարավային՝ պահպանված մասի բավական խմանքով արված մանրամաս-

դարերի ժամանակագրական սահմաններում գոյատևած Արիևի դամբարանադաշտի 640 կատակոմբային թաղամների մասին է (Արիևյան Գ., «Վախադարյան Կ. 1996, էջ 69, նկ. Գ: Վախադարյան Կ. 1975: Վախադարյան Կ. 1979):

Ավելացնենք նաև, որ Սևանի ավազանից ոչ հեռու, Հրազդան գետի այց ափին տեղադրված Դյոնաշեն գյուղի մտակալքում, շինարարական աշխատանքների հետևանքով պատահաբար բացված և ավերված քարայր-դամբարանից հայտնաբերված հարյուր տասնհինգուսուկու մյուսերը (ներկայումս պահվում են Սևան քաղաքի «Ազգային պարկի» գրասենյակում) փաստում են, որ նման կառույցներն իրենց գոյությունը Հայաստանում պահպանել են Վանուսյի թագավորության անկումից հետո էլ (նշված մյուսերը վերաբերում են Երվանդունիների թագավորության ժամանակներին և թվագրվում են մ.թ.ա. VI-V դարերով):

Ուստի, թերևս անհիմն չեն Հին Արևելքի քաղաքաշինական գործընթացների և ճարտարապետական ոճերի զարգացման պատմությանը զբաղվող արևելագետների ենթադրություններն այն մասին, որ իրենց տեսակով կիրառության և այդուհետև դամբարանաշինական աշխատանքների կատարման լավ մշակված նորմերով, վանուսյան քարայր-դամբարանները կարևոր դեր կարող են խաղալ ավելի ուշ ժամանակների Արևելքում Արևելքում և Վանուսյի թագավորության ռազմարդարական հզորության փաստացի հաջորդ հանդիսացող Արեմնյան Իրանի սկզբունքավոր ժայռային դամբարանների (Նախշ-ի Ռուստամ) կառուցողական տեղանքների մեծավորման, այսինքն և ավելի ուշ շրջանի իրանական նմանատիպ կառույցների (մասնավորապես Թափ-Քուստանի) տեղական կիրառության գործում (Տիրացյան Գ. 1964: Մելքոնյան Մ. 1995, էջ 33: Հովհաննիսյան Կ. 1996, էջ 179-180: Փրայ Բ. 1972, էջ 100: Կիրազյան Գ. 1988, էջ 30-31: Fletcher Բ. 1954, էջ 61-62: Brentjes Բ. 1974, էջ 32: Kleiss W., Calmeyer Բ. 1975, էջ 94: Harper Բ. 1996):

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՏԱՄՈՒՆԵՐԸ

Գեղովուրի քարայր-դամբարանին պատկանող հնագիտական իրերի ողջ հավաքածուն, ինչպես նշեցինք վերևում, ի մի է բերվել 1980 և 1993 թվականների հավաքչական և պեղման աշխատանքների շնորհիվ: Ըստ դրան, 1980 թվականին կատարված հավաքչական աշխատանքների հետևանքով Հայաստանի Պատմության Գիտական ակադեմիան և մյուսը գործել գերազանցապես երկրորդ լիովին ավելված սրանից բացառաբար կազմող կազմող մյուսերը: Ներկայումս դրանք պահվում են քանդազարմի հնագիտական մետաղի գեոտեղաբանում և գրանցված են ըստ Մայր Մատյանի 14993 և ըստ բաժնի 2695 դասիչը կրող հնագիտական հավաքածուի 1-61 համարների տակ: Նույն դամբարանային համալիրին պատկանող հնագիտական իրերի մյուս մասը հայտնաբերվել է 1993 թվականին, կառույցի առաջին սրանի (ճախարահի) պեղման աշխատանքների ընթացքում: Այս մյուսերը ներկայումս գտնվում են ՀՀ ԳԱՀ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական իրերի գեոտեղաբանում:

Գեղովուրի քարայր-դամբարանի ի մի բերված հնագիտական իրերի ողջ հավաքածուն իր մեջ ներառում է ապտազիմոսյան, սպարի, կաուոյի աստճանի մասերի մնացորդներ, պերճանքի առարկաներ և հնամարտաբանական ճյուղ:

ՄՊՈՒՍԱԳՆՈՒՅՈՒՆ ԿՄՈՒՆԵՐԸ:

Քարայր-դամբարանից հայտնաբերված ճյուղերի մեջ այս խումբը մեծաթանկներից մեկն է և ներկայումս գտնվում է Երևանի գյուղատնտեսական Վերջիններս տեղադրված են եղև երկրորդ լիովին ավելված սրանի ներսում:

Առաջին և առավել տեղեկատվական ճնուշը՝ երկաթեղանակ ձուղակ վերնամասով (այսինքն 5.4սմ, քարճորությունը 1.5սմ), ուղիղ կենտրոնում ակտավոր բունակով (երկարությունը՝ 8.2սմ, լայնքը՝ 2.4սմ) և սրտան և խաչաճուղով (այսինքն 5.5սմ, քարճորությունը՝ 3.4սմ) երկաթե դաշույնն է (շերտը վառ է պահպանվել): Դաստակի ողջ երկարությունը վերնամասի վերին եզրից մինչև խաչաքարի ստորին եզրը՝ 12.3սմ է, իսկ շերտի պահպանված մասի երկարությունը՝ 8.1սմ (տա. 14, նկ. 1): Նման կառուցվածք ունեցող դաշույններն ու սրերը մասնագիտական զրկակներում մեջ հայտնի են «սկիանիք» անվամբ: Կրթքը լայն տարածում ունեն Հայկական լեռնաշխարհի (Կարմիր դուր - Թեյշեբախին, Կարմիրդուր, Մուսիերի, Ստեփանակերտ, Գետարակ-Կեղարեն), Կովկասի (Սամբալտ, Բրիլի, Թիլ, Սոխումի, Մախար, Փիժանորա, Շուպի, Դվանի, Գուտալիտ, Նիզիզիանի), Հարավուստական տափաստանների (Միներալնիե Կոյի, Սոխվոն), Ուկրաինայի (Ստարայա Սոչիլա, Գենգալիսեդուրակ, Պոտակա), Միջին Ասիայի (Ալտյունիան, Պավլոդար, Ուլգարակ, Կոկչեդակ, Թեղեքման-տա), Ուրալի (Նոնիորենակ, Լապտանյան հովիտ, Արմիլովո, Բիկովո) և Հեռավոր Արևելքի (Միմոսիանկ) համաժամանակյա հնագիտական հուշարձաններում, ըստ մասնագետների, իրենց վրա կրում են սյուրալական զինագործության առանձնատվությունները և կարող են տեղադրվել մ.թ.ա. VIII դարի վերջին քաղաքից մինչև մ.թ.ա. I հազարամյակի վերջին ընդգրկող ժամանակագրական սահմաններում (Պաղերվալու Մ, Նեսայ Մ. 1981, էջ 85-96: Гобеджшишвили Գ. 1952, ադ. 40: Калантадзе А. 1954, էջ 78, ադ. VIII, նկ. 19: Пиотровский Բ. 1959 (ա), էջ 175, ադ. 6, նկ. 1: Трапп М. 1969, էջ 26, ադ. II, նկ. 12: Мартirosian А. 1974, էջ 172: Барамидзе М. 1977, ադ. VIII, նկ. 8: Тегов Б. 1980, էջ 57-59: Есяня С., Погребова М. 1985, էջ 40-52: Сленова Н. 1994, էջ 512-515, 533-535, նկ. 14-16):

Սպառազինության հայտնող նմուշները երկաթի խողովակաղբառ երկու միավորներ են (աղ. 14, նկ. 2, 3): Նիզակները մեկի կերպարությունը 27սմ է, իսկ մյուսինը՝ 28սմ: Առասպելը ցուց կենտրոնական որով, տերևնա լեզվակ ունի: Երկրորդ միավորը կա օժաված է տերևան լեզվակով, սակայն, ի տարբերություն առաջինի՝ գուրկ է ուռուցիկ կենդրոնական ուղիք է հատալույում շեղանկյունան է: Նման միավորները լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր Բլուր-Թեյշեբաղի, Երևանի «Ավտոագրեզ» գործարանի դամբարան, Էրեբունի, Գյումրի, Կոտայքի, Օշական, Կորթան, Գեղեղ, Հոռու, Քեթի, Լոռի բերդ) և մասնավորապես Սևանի ավազանի (Նորասուտ, Արվիկաբար, Կարմիրգյուղ, Կարնաղբոր, Աստղածուր, Սարդիակ) համաձայնականայն հնագիտական համալիրների և տեղավորվում են մ.թ.ա. XI/IX-VII/VI դարերի ժամանակագրական սահմաններում (Փիրիալույս Ա. 1991, էջ 31: Ենճեպարյան Ն., 1991, էջ 66-69: Պյոտրովսկայ Բ. 1949, աղ. 10, 11: Մարտիրոսյան Ա. 1964, էջ 211, նկ. 83, էջ 272, նկ. 105, էջ 284, նկ. 110, աղ. XXX - XXXII: Եսայան Ը., Ենյոզյան Լ., Ամառյան Շ., Կառեչյան Ա. 1991, աղ. X, նկ. 6, 7):

Սպառազինության են վերաբերում նաև Գեղիտլոյից հայտնաբերված բրոնզե կապարեղ բեկորները (աղ. 14, նկ. 4): Դրանցից մեկն, ըստ ամենայնի, կապարեղ վերին եզրի մասն է կազմել, ուռուցիկ դրվագված երկու հորիզոնական ուղիղով բաժանված է առանձին գոտիների և դրանցից վերինի մակերեսին, զապարեղով մեկնեցմբ իրար ուղղված փորագրի խռանկյունների հորիզոնական զույգ շարքեր է կրում: Սա մայշը հանդիպում է նաև Կարմիր Բլուրից պեղված կապարեղների վրա և մեծավ մասամբ երկզում է մարտակաթը և կատանարիկները ներկայացնող փորագրի տեսարանը (Պյոտրովսկայ Բ. 1959, աղ. 40-41: Մարտիրոսյան Ա. 1961, աղ. 17: Նույն ճախը են կրում նաև Երևանի «Ավտոագրեզ» գործարանի վանոսայան դամբարանից հայտնաբերված, ինչպես նաև Սամարտի քանդարանում պահվող և Սարդուրի II-ի սեպագրի արձանագրությունը կրող գոտիների բեկորները (Եսայան Ը., Ենյոզյան Լ., Ամառյան Շ., Կառեչյան Ա. 1991, աղ. XVIII: Kellner H.-J. 1991, էջ 158-159, նկ. 5):

Գեղիտլոյի քարայր-դամբարանի հայտնաբերված սպառազինության օրինակների մեջ առավել մեծաքանակը ձիու առագանին և մարտակաթի տարբեր մասերի բրոնզե և երկաթե մնացորդներն են: Առագանին մեջ առանձնահատուկ են չորս տարբեր սանձերի մասեր հանդիպողով մետաղական մնացորդները: Դրանցից առաջինը երկնետալայն (բրոնզե և երկաթից պարտաթաված) սանձի օղական ձեղերով երկաթի երեքմաս երանձանի երկրորդ են, որոնց վրա պահպանվել են մի ծալիքի գամանն, իսկ մյուսին՝ ճանկավոր վերջավորություններ ունեցող աղեղմանն բրոնզե երկու լվանները: Վերջիններս դիմալի կողմից օժաված են զույգ միջանցիկ խռանկյունան կարվածքներով (աղ. 15, նկ. 3): Նմանատիպ կառուցվածք ունեցող լվաններով ձիասանձերը (առավել և դրանց երկնետալայն օրինակները) եզակի երևույթ են վանոսայան սապազների մեջ: Գեղիտլոյից հայտնաբերված այս երկնետալայն սանձի մոտիկ զուգահեռները պատահական գտածոներ են Արևմտյան Հայաստանի տարածքից (գտնվելու կոնքրետ վայրը հայտնի չէ) և ներկայումս պահվում են Մյանցի և Մյունխենի քանդարաններում (Gropf G. 1981, էջ 106, աղ. II b: Vanden Berghes L., De Meyer L. 1982-1983, էջ 147, նկ. 61: Merhav R., Seidl U. 1991, էջ 83, նկ. 34): Թերևս նույն սանձերին կարելի է համադրել նաև Լոռի բերդի բլրի 64 դամբարանի երկրորդ խցում հայտնաբերված ճանկավոր լվաններով օրինակները ևս (Arménie 1996, էջ 126):

Երկրորդ ձիասանձը պահպանվել է միայն կիսով մաս: Այն ևս երկնետալայն է օղական մեջավորություններով երկաթե երեքմաս երանձանի մի հատվածն է հանդիսանում, որի վրա պահպանվել է առանձնահարաք մեղաջող ծալիքերով բրոնզե աղեղմանն

լվանը: Վերջինս երկաթե երանձանին հազմող կենտրոնական անցքից վեր ու վար, երկու կիսավոր մեծակներ ունի փոկերի արձագանք հասնող (աղ. 15, նկ. 2): Նման բրոնզե և երկնետալայն սանձերը լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր Բլուր, Լոռի բերդ, Դուռնաբար, Կամանոք, Բջին, Շիրակական, Մակարաշեն և այլն) մ.թ.ա. VIII-VII դարերի հնագիտական հուշարձաններին և երբեմն իրենց վրա վանոսայի թավալորներին (Սեմուս, Սարդուրի) սեպագիր անձանաններն են կրում (Նասյան Ա. 1994, աղ. 8, նկ. 15, աղ. 11, նկ. 7, 12, 13, 15, 16: Պյոտրովսկայ Բ. 1955, էջ 45, նկ. 34: Մարտիրոսյան Ա. 1964, էջ 212, նկ. 84, աղ. XXI, նկ. 19, 20: Դեվեճյան Շ. 1981, աղ. 23, նկ. 1: Schaeffer C. 1948, էջ 471, 499, նկ. 252: Тагышбек О. 1975, էջ 151-154, աղ. XXXII, նկ. e: Vanden Berghes L., De Meyer L. 1982-1983, էջ 146-147, նկ. 57-59: Merhav R., Seidl U. 1991, էջ 79-81, նկ. 31-33):

Չիասանի երրորդ օրինակը պահպանվել է միայն լվաններից մեկը (աղ. 15, նկ. 1): Այն վանոսայան դեկորատիվ արվեստի ճի արժեքալուր ունու է (Լվանի կենտրոնական տակվածանանն մասը, դիմալից կողմից օժաված է երկու ուղղանկյունան, միջանցիկ կարվածքներով, որոնց միջև ընկած տարածություն կենտրոնում երանձան հացանելու համար արված, չջրհամակն անցքն է: Նեղ կողային մասը երկու հանդիպակաց հատվածներում զարդարված է համաչափ կոնցենտրվ վեցանկյան փորագրի գծապատկերներով: Լվանի ծալիքն ավարված է կենդանակաթ թարթարվալատ արձանակներով: Վերինը կրավածն ինձորակի վրա արձագանք ուղղանկյուն պատվածանին թառած գիշանգ է, մեջքին ծալած փորագրազարդ բեկովը, կես կողային և գլխին արված որդուն փետրագրարով: Լվանի ստորին ծալիքին բնավոր ձիու գուլիս է ընդգծված աչքերով և ճակատին համաչափ թավակն մագպիցնով: Կենտրոնակերպ վերջույթներն ունեցող լվաններով սանձերը, բեռ ու հառախ, այնուամենայնիվ հանդիպում են վանոսայան հուշարձաններում: Նման ուշագուծող օրինակ հայտնաբերվել է Ծմբին (Արթրն բեկին) դամբարաններից մեկում, զարդարված է ձիու արձանիկներով և վերաբերում է մ.թ.ա. VIII-VII դարերին (Նասյան Ա. 1994, էջ 77-78, աղ. 28: Օզցնչ Դ. 1961, էջ 272-278, նկ. 17): Թերևս սանձերն այս տարբերակին պետք է դասել նաև Լոռի բերդի հարուստ դամբարաններից մեկից հայտնաբերված և ձիու արձանիկներով պարզապես լվաններով օրինակը ևս (Նեկեչյան Ա. 1991, էջ 38-41):

Հավանաբար միասնակ լվան պետք է որ ծալած լինի նաև Գեղիտլոյի քարայր-դամբարանի երկրորդ օրինակը հայտնաբերված սեղանանն երկարաքանակի բեկորը (աղ. 15, նկ. 4): Այդ է վկայում նրա դիմալից մասի կենտրոնում թավակն անցքը: Նման իրենական-թանթանն բրոնզե և երկաթե լվաններով միասանները թավակն տարածված են վանոսայան ժամանակներից վերաբերող դամբարանային համալիրներին (Լոռի-բերդ, Օշական, Ռեղիկի լազեր, Էջմիածին, Աստղածուր, Գավառ և այլն) և իրենց զուգահեռներն ունեն նույն ժամանակաշրջանի բարձրարժանակներում (Նասյան Ա. 1994, էջ 40, աղ. 11, նկ. 3-6, 8, 9: Մարտիրոսյան Ա. 1964, էջ 225-229, նկ. 87: Պյոտրովսկայ Բ. 1959, էջ 155, նկ. 22):

